ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

31 հոկտեմբերի 2017թ. թիվ 451-Ա

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 15-Ի ԹԻՎ 75-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին ենթակետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2010թ. մարտի 18-ի թիվ 113-Ն հրամանով հաստատված «Հայաստանի Հանրապետության «Պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպության կոլեգիալ կառավարման մարմնի՝ խորհրդի ձևավորման» կարգի 11, 15 և 17 կետերը, հաշվի առնելով «ՀՀ Լոռու մարզի Ախթալայի թիվ 2 միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի ծնողական խորհրդի նախագահի 24.10.2017թ. գրությունը՝

Ո ր ո շ ու մ եմ.

ՀՀ Լոռու մարզպետի 2016թ. մարտի 15-ի «Լոռու մարզի դպրոցների խորհուրդների կազմերը հաստատելու մասին» թիվ 75-Ա որոշման հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունը.

«ՀՀ Լոռու մարզի Ախթալայի թիվ 2 միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ մասում «Փարսադանյան Լուսինե» բառերը փոխարինել «Քամալյան Վիոլետա» բառերով:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ Ա.ՆԱԼԲԱՆԴՅԱՆ

2017թ. հոկտեմբերի 31
ք.Վանաձոր